Ձև 1

Համաձայնեցված է
Շրջակա միջավայրի նախարար
(լիազոր մարմնի անվանումը)
Համբարձում Մաթևոսյան
(ստորագրություն,անուն ազգանուն)
«22» հոկտեմբեր 2025թ.

Հավելված
Գյումրի
համայնքի
2026 թվականի
բնապահպանական ծրագրի

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/Հ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (հազ. դրամ)
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ	8,792.0
	Գյումրի համայնքում ծառատնկման աշխատանքներ իրականացնելու նպատակով ծառերի ձեռքբերում՝ համաձայն ծրագրի	*8,792.0*
ԸՆԴԱՄԵՆԸ		8,792.0

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու 2025թ.
օգոստոսի -ի N -Ա որոշման

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

-------------------------- Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

07 հուլիս 2025թ

2025-07-07 10:31:50 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

NN ը/կ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (հազ. դրամ)
1.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ	8 792.0
	Գյումրի համայնքի այգիների և պուրակների հատվածներում կանաչ գոտու վերականգնում և ծառատունկ	8 792.0
2.	ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ	0.0
ԸՆԴԱՄԵՆԸ՝		8 792.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՅՏ 2026

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 05.06.01

Գյումրի համայնքի այգիների և պուրակների հատվածներում կանաչ գոտու վերականգնում և ծառատունկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքի նկարագրությունը.....3

Ծրագրի ընդհանուր նպատակը..... 5

Ծրագրի հիմնավորումը 7

Հավելված
1..... 8

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյումրին գտնվում է Շիրակի մարզում՝ Ախուրյան գետի ձախ ափին: Գյումրու սարահարթը, ծովի մակարդակից բարձր է մոտ 1,580 մետր, շրջապատված է Ջաջուռի և Կամխուտի լեռներով, ինչպես նաև հարավարևելքում սահմանակցում է Արագած լեռան լանջերին, հյուսիսում՝ Շիրակի լեռնաշղթային, հարավում՝ Արարատյան դաշտավայրին, իսկ արևելքում՝ Փամբակի լեռնաշղթային: Այն սահմանագծվում է Չերքեզի, Ջաջուռի, Գյումրու և այլ ձորերով: Աշխարհագրական դիրքի առումով կարևորագույն կետերից մեկն այն է, որ Գյումրին խոցելի է բնական աղետների նկատմամբ: Գյումրու, ինչպես նաև ողջ երկրի համար բարձր ռիսկային են համարվում երկրաշարժերը, ջրհեղեղները, երաշտը, կարկուտը և սողանքները: Գյումրին դասվում է Հայաստանի բնակավայրերի այն 35 տոկոսի շարքում, որոնք գտնվում են սողանքներին ենթակա տարածքներում:

Գյումրի համայնքի տարածքը 4429 հեկտար է: Գյումրի քաղաքն ապրել է պատմական զարգացման տարբեր փուլեր և հարուստ էպատմամշակութային ժառանգությամբ:Քաղաքի կենտրոնական մասը, ինչպես նաև Ախուրյանի ձորը՝ որպես բնականլանդշաֆտի պահպանման տարածք, ընդգրկված են «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի սահմաններում:«Մեծ Կումայրի» արգելոց-թանգարանը զբաղեցնում է շուրջ 1300 հա տարածք, որիտարածքում գտնվում է 1170 պատմամշակութային հուշարձան:

Համայնքը տարեկան ստանում է մոտ 2500 ժամ արեգակնային լույս և ջերմություն: Մեծ է հորդաբուխ աղբյուրների քանակը, որոնք միասին մեկ վայրկյանում տալիս են 1200 լիտր ջուր:

Որոշ ջրային կառույցների վատ վիճակը, որոնք նախատեսված են մեղմելու միկրոկլիման, ամբողջացնելու համայնքի ճարտարապետական տեսքը և հանդիսանումեն համայնքի այցեքարտը: Գյումրու համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող 6ջրային կառույցներից 4-ը վերանորոգվել են և այժմ գործում են:

Համայնքի արևմտյան մասով հոսում է Հայաստանի Հանրապետության ջրառատ գետերից մեկը՝ Ախուրյանը: Գյումրին գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում: Այստեղ 1840թ. հունիսի 20-ին, 1846թ. մարտի 22-ին, 1926թ. հոկտեմբերի 29-ին, 1988թ.դեկտեմբերի 7-ին տեղի են ունեցել աղետալի երկրաշարժեր՝ մարդկային մեծ զոհերով և նյութական կորուստներով:

Շրջակայքը հարուստ է շինանյութերով՝ տուֆով, բազալտով, դիատոմիտով, կավով, սևահողային արգավանդ դաշտերով:Գյումրին իր անվանումը վերցրել է Ախուրյան գետի Գյումրիգետ վտակի անվանումից,որը հոսում է համայնքից ոչ հեռու:

Գյումրին հայտնի է իր հարուստ պատմամշակութային ժառանգությամբ և յուրահատուկ ճարտարապետական առանձնահատկություններով:

Գյումրին խոշոր տրանսպորտային հանգույց է, որը միջպետական մայրուղով և երկաթուղային կայարանով կապված է Հայաստանն ու Վրաստանը միմյանց կապող Երևան-Թբիլիսի-Բաթումի երկաթուղու և Շիրակի միջազգային օդանավակայանի հետ: Համայնքում հաշվառված բնակչության թիվը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ 157,454 է:

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյումրի համայնքը, որպես ազդակիր համայնք ՝ մասհանումներ է ստանում «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի /Շիրակ օդանավակայան/, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Գյումրիֆիշ» ՍՊԸ-ի կողմից արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և /կամ/ միացությունների արտահոսքերի և ընդերքօգտագործման թափոնների տեղադրման կամ պահման համար վճարվող բնապահպանական հարկերից:

Հայաստանի Հանրապետության երկրորդ խոշոր քաղաքը հանդիսացող Գյումրի համայնքը բազմաբնույթ էկոլոգիական և հանրային առողջության խնդիրների առաջ է կանգնած՝ պայմանավորված ինչպես արդյունաբերական ժառանգությամբ, այնպես էլ քաղաքային ենթակառուցվածքների մաշվածությամբ և կանաչ գոտիների անբավարարությամբ: Հատկապես մտահոգիչ է մթնոլորտային օդի աղտոտվածության աճող միտումը, ինչը ուղիղ ազդեցություն է ունենում բնակչության առողջության և կյանքի որակի վրա:

Միջազգային և տեղական փորձը վկայում է, որ կանաչապատ տարածքների ընդլայնումը քաղաքային էկոհամակարգի կայունացման ամենաարդյունավետ և տնտեսապես կիրառելի մեթոդներից է: Հատկապես ծառերի և թփերի նպատակային տնկումը՝ ըստ օդային հոսանքների ուղղության և աղտոտման աղբյուրների դասավորության, նպաստում է օդում մանրէների, փոշու, ծանր մետաղների, ազոտի և ծծմբի միացությունների կլանմանը: Հաշվարկված է, որ 1.0 հա կանաչապատ տարածությունը օրական կարող է կլանել 8.0 կգ ածխաթթու գազ և այնքան թթվածին արտադրել, որը միանգամայն բավարար է 200 մարդու կանոնավոր շնչառությունն ապահովելու համար: Կանաչ տնկարկներն օդում զգալիորեն պակասեցնում են նաև վնասակար նյութերի (քլոր, ֆտոր, արծաթ, արճիճ, նիկել, մոլիբդեն, ցինկ և այլն) ընդհանուր քանակությունը: Գյումրի համայնքում կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 150,4 հա: Ընդհանուր մակերեսից 144,4 հա կազմում են այգիները, զբոսայգիները, պուրակները, մնացած 6 հա փողոցների ծաղկանոցներն ու սիզամարգերը: Գյումրի քաղաքում բաց կանաչ տարածքների հարաբերակցությունը յուրաքանչյուր բնակչի հաշվով կազմում է 13.4 մ^2/բնակիչ: Նախատեսվում է ցուցանիշն ավելացնել մինչև 14 մ^2/բնակիչ:

Բացի օդի ֆիլտրացիայի ֆիզիկական ազդեցությունից, կանաչապատ տարածքներն ունեն այլ կարևոր բնապահպանական գործառույթներ.

- նվազեցնում են փոշու նստվածքը շենքերի վրա,
- կարգավորում են տեղային ջերմային կլիման,
- բարելավում են հողի կառուցվածքը և ջրակլանման ունակությունը,

- կանխում են միկրոդաշտային էրոզիան։

Հաշվի առնելով Գյումրիի քաղաքաշինական հին ճարտարապետական կառուցվածքը և որոշ հատվածներում բաց տարածքների առկայությունը՝ ծառատունկի և կանաչ տարածքների ընդլայնման համար կան նպաստավոր նախադրյալներ։ Միևնույն ժամանակ, ըստ մեր դիտարկումների, ներկայումս կանաչ գոտիները չեն համապատասխանում քաղաքի տարածքի, օդի աղտոտման մակարդակի և բնակչության թվաքանակի նկատմամբ հաշվարկված նվազագույն միջազգային չափանիշներին։

Բնապահպանական հարկից մասհանվող գումարներով նախատեսում ենք իրականացնել Գյումրի համայնքի Գործարանային փողոցի հարևանությամբ 11հա մակերեսով հողամասը վերածել կանաչ գոտու, ինչպես նաև զբոսայգիներում և պուրակներում իրականացնել ծառատունկ։ Կանաչապատ գոտիների ոռոգումը կիրականացվի համայնքապետարանի ջրցան մեքենաների միջոցով։

Ծրագրով ընտրվել են քաղաքի այն տարածքները կանաչապատմանը, որոնք վերջին տարիներին դարձել են բարձր օդային աղտոտվածության գոտիներ՝ տրանսպորտային հոսքերի, շինարարական փոշու և կենցաղային աղբի կուտակման հետևանքով։

Ծրագրի հիմնական գործողություններ

- 2500 ծառի տնկում բարձր փոշի կլանող հատկություններ ունեցող տեսակներով (Հավելված 1 գետնամերձ թեղի, բրգաձև բարդի, սոչենի կովկասյան, արոսենի, հացենատերև թխկի, փշատենի նեղատերև և այլ փշատերև ծառատեսակներ, որոնք հարամր են բարձր լեռնային գոտու կլիմային)

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Գյումրի քաղաքի տարածքում մթնոլորտային օդի փոշով աղտոտվածության վիճակի մասին պետական մոնիթորինգի տվյալներով 2024 թվականի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.1-3.7 անգամ, 2025 թվականի մարտ ամսվա ընթացքում գերազանցել է ՍԹԿ-ն 1.1-2.0 անգամ։ Այս ցուցանիշները

փաստում են այն մասին, որ Գյումրին հանդիսանում է բարձր փոշիացածության գոտի, ինչը լրջորեն սպառնում է բնակչության առողջությանը: Փոշու փոքր մասնիկները (PM10, PM2.5) ներթափանցում են շնչուղիներ և առաջացնում շնչառական, սրտանոթային և ալերգիկ հիվանդություններ: Հատկապես խոցելի են երեխաները, տարեցներն ու քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք:

Ստեղծված իրավիճակում քաղաքային կանաչ տարածքների ընդլայնումը՝ որպես բնական ֆիլտրային համակարգ, հանդիսանում է մթնոլորտային օդի որակի բարելավման ամենաարդյունավետ և մատչելի միջոցներից: Ծառատունկը զգալիորեն նվազեցնում է փոշու պարունակությունը օդում, բարելավում է օդի խոնավությունը, կլանում է վնասակար գազեր և ստեղծում բարենպաստ միկրոկլիմա: Այդ իսկ պատճառով Գյումրիի քաղաքում կանաչ գոտու հիմնումը և առկա կանաչ տարածքներում ծառերի ավելացումը դիտվում է ոչ միայն որպես բնապահպանական, այլև հանրային առողջապահական առաջնահերթություն:

Ծրագրի հիմնական շահառուները՝ Գյումրիի բնակչությունը:Բնակիչներն ուղղակիորեն կօգտվեն մաքուր և բարելավված մթնոլորտային օդից, ինչը կնվազեցնի շնչառական և ալերգիկ հիվանդությունների տարածվածությունը, բարելավելով հանրային առողջության ընդհանուր ցուցանիշները: Օդի աղտոտվածության նվազեցումը կարող է հանգեցնել առողջապահական ծախսերի կրճատման՝ կապված փոշու ներշնչմամբ պայմանավորված հիվանդությունների կանխարգելման և բուժման հետ:

Ծրագրի բյուջեն՝ Ընդհանուր բյուջեն ՝ 8792.0 հազար ՀՀ դրամ:

Ծրագրի բյուջեի ֆինանսավորում՝ բնապահանական հարկից մասհանվող գումարներ:

Հավելված 1

անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ
	Նախատեսվում է՝ ծառերի բնի պարագիծը 8-10 սմ: Ցողունը ուղղաձիգ, բավարար արմատային համակարգով՝ ցանցապատված հողագնդով: Բողբոջները՝ չբացված, առանց չորացած ճյուղերի: Տնկանյութը պետք է հարմարեցված լինի հյուսիսային տարածաշրջանի կլիմային :	հատ	**դրամ**	
Կեչի՝ 2 մ-ից բարձր	հատ	500	4000	2 000 000
Արոսենի՝ 1,8 մ-ից բարձր	հատ	450	3000	1 350 000
գետնամերձ թեղի՝ 2 մ-ից բարձր	հատ	350	3500	1 225 000
բրգաձև բարդի՝ 2 մ-ից բարձր	հատ	390	4000	1 560 000
սոչենի կովկասյան՝ 1,5 մ-ից բարձր	հատ	300	4000	1200 000
հացենատերև թխկի՝ 2-2,5 մետր	հատ	260	2500	650 000

փշատենի նեղատերև	հատ	260	3000	780 000